

ՕՐԵՆՍԴԻՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՍԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍՈՒՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՆՈՐ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

Ապրիլի 29-ին, Վրաստանի խորհրդարանը՝ 72 կողմ ձայներով երրորդ ընթերցմամբ ընդունեց վարչական իրավաստումների մասին օրենսգրքի փոփոխությունները, ըստ որի՝ խստացվում են մանր խուլիգանության ու ոստիկանի պահանջին չենթարկվելու համար պատժամիջոցներն ու ավելացվում են վարչական կալանքի ժամկետները:

Նշենք, որ քննարկմանը Եվրախորհրդի նախագահի միջնորդությամբ իշխանության եւ ընդդիմության միջեւ փոխհամաձայնագիրը ստորագրած ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները բացակայում էին: Ներկա էր միայն «Լեւո» կուսակցության անդամ Աննա Նացվիլիշվիլին, ով բացասաբար գնահատեց վերոնշյալ նախագիծը:

Ինչ վերաբերում է օրենսգրքում իրականացված փոփոխությանը, ապա օրենսգրքի 166-րդ հոդվածում ավելացվել է երկրորդ մաս, որով սահմանվում է, որ մանր խուլիգանություն իրականացնելուց ու տուգանվելուց հետո, կրկնակի անգամ նույն արարքի համար իրավաստի (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐՊՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԿԻՆ ՓՈԽՆԱԽԱԳԱՆԸ՝ ՎՐԱՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Մայիսի 7-ին, կառավարության գրասենյակում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին ներկայացրեց էկոնոմիկայում օտարերկրյա ներդրումներ ներգրավելու ուղղությամբ վարչապետի խորհրդակցական՝ Եվրոպական ներդրումային բանկի նախկին փոխնախագահ, Սլովակիայի էկոնոմիկայի նախկին նախարար Վադիլ Չուրակին:

- Ես կցանկանայի ներկայացնել իմ հատուկ խորհրդական Վադիլ Չուրակին, ով աշխատելու է օտարերկրյա ներդրումների ոլորտում: Ինչպես գիտեք, մենք մշակում ենք կորոնավիրուսի հետևանքով մեծապես տուժած տնտեսության վերականգնման նոր ծրագիր, ուր օտարերկրյա ներդրումները առաջնային դեր կխաղան Վրաստանի հետագա զարգացման համար: Ուստի մենք ընտրել ենք Վադիլ Չուրակին, որը Վրաստանի մեծ բարեկամն է: Նա լավ ծանոթ է մեր տնտեսական թիմին: Միաժամանակ, ես կցանկանայի նշել, որ մայիսի 6-ին նա առաջադրվեց փոքր եւ միջին ձեռնարկատիրության գծով ԵՄ հատուկ



ներկայացուցիչ, - ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

ՈԼՈՐՏ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԵՂԾՈՒՄ Է ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՌԵՏՍՐ

Վրաստանի մշակույթի նախարարությունը սկսում է ստեղծել ռետսոր, որը կմիավորի վերականգնման եւ պահպանման վարպետների:

Ռետսորը ստեղծվում է Վրաստանում մշակութային ժառանգության հուշարձանները պահպանելու նպատակով: 2022 թվականից գերատեսչությունը կմշակի մասնագետների հավաստագրման համակարգ:

Ռետսորի ստեղծման հետ կապված՝ մայիսի 6-ից հունիսի 15-ը Մշակույթի նախարարությունը հայտարարումներ կընդունի հետևյալ մասնագիտությունների վարպետներից՝ աղյուսագործ, հյուսն, դարբին, տանիքագործ, դեկորատոր եւ այլն:


Դիմումներն ընդունելուց հետո թեկնածուները կներկայանան հատուկ հանձնաժողովի առջեւ, որի կազմում կլինեն արհեստավարժ ճարտարապետներ, վերականգնողներ եւ այս ոլորտի այլ մասնագետներ:

Կարպետները կարող են կապվել Վրաստանի մշակույթի նախարարության պաշտոնական ֆեյսբուքյան էջով՝ info@culture.gov.ge, էլեկտրոնային փոստով կամ թեժ գծով՝ 2-022-229:

Ենթադրվում է նաեւ, որ 2022 թվականի մայիսի 1-ից միայն հավաստագրված մասնագիտական հմտություններ ունեցող մասնագետներին կթույլատրվի աշխատել մշակութային ժառանգության օբյեկտներում:

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

«ՎՐԱՍՏԱՆ» ԻՄ ԺՈՒՆԱԼԻՍԱԿԱՆ ՕՐՐԱՆ
«Վրաստան» թերթը հարյուր տարեկան է: Ես երջամիկ մարդ եմ, որովհետեւ ահա արդեն ակամատեսն եմ դառնում այն երկու լրատվամիջոցների մեկ-դարյա հոբեյանների, որտեղ աշխատել եմ եւ կայացել որպես ժուռնալիստ: Ընդամենը երկուսուկես տարի առաջ լրացավ Արմենպրեսի 100-ամյակը: Իսկ հիմա ես շնորհավորում եմ «Վրաստան» թերթի հարյուրամյա հոբեյանը:



ԼԵՎՈՆ ԱԶՐԻՅԱՆ

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» ՄԻՍԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԵՐԻՆՆ ՈՒ ՎՐԱՅԻՆԵՐԻՆՆ Է

Թբիլիսահայ համայնքի մշակութային ու կրթական միջոցառումներին հաճախ եմ լինում, կիսում ուրախությունը, ելույթ ունենում՝ այդպիսով հարգելով հայ տատիս հիշատակը: Գետոս սկսեցի հետաքրքրվել հայերենով, հայ գրականությամբ, սկսեցի սովորել լեզուն: Արդեն հասցրել էի ծանոթանալ բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանի հետ, ով ահռելի աշխատանքի հետ միասին նաեւ «Վրաստան» թերթի այլուներից մեկն էր:



ԼԵՎՈՆ ԲԱԳԴԱՏՅԱՆ

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐ...

Մայիսի 9-ին նշվում է գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 76-րդ տարին:



1945 թվականի մայիսի 1-ին, ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում, կիսաքանդ Ռայխստագի գմբեթին փողփողացող Հաղթանակի դրոշմը ազդարարեց Հայրենական մեծ պատերազմի ավարտը:

Իսկ մայիսի 9-ին ստորագրվեց Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որի արդյունքում, հաղթանակով պսակվեց 1418 օր ու գիշեր տևած մահուկենաց կռիվը:

Մեծ հաղթանակի գործում

իրենց արժանի ներդրումն ունեցան նաեւ վրաց եւ հայ ժողովուրդները, որոնք առանձնակի թանկ վճարեցին այդ հաղթանակի համար՝ նրանցից յուրաքանչյուրը նվիրաբերեց իր հազարավոր զավակների կյանքը:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅՎԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԶԸՆՏՐԵՅՆ ԵՒՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Մայիսի 3-ին Հայաստանի Ազգային ժողովում կայացած քվեարկության արդյունքում Նիկոլ Փաշինյանը չընտրվեց Հայաստանի վարչապետի պաշտոնում՝ ապահովելով երկրում արտա-հերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման հնարավորությունը: Հարցի քվեարկությունը ստացավ 1 «կողմ», 3 «դեմ» եւ 75 «ձեռնպահ» ձայն:

Նիկոլ Փաշինյանի թեկնածությունն առաջադրել էր խորհրդարանի «Իմ քայլը» խմբակցությունը, որի անդամները քվեարկեցին «ձեռնպահ»:

Ազգային ժողովի հատուկ նիստին «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը չէր մասնակցում:

Հիշեցնենք, որ ապրիլի 25-ին Նիկոլ Փաշինյանը հրաժարական ներկայացրեց Հայաստանի վարչապետի պաշտոնից, որպեսզի, խորհրդարանի լուծարմամբ, երկրում կազմակերպվեն արտա-հերթ խորհրդարանական ընտրություններ:



(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

COVID - 19

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԱԿՏԻՎԱՆՈՒՄ Է

ՊԱՏՎԱՍՏՎԵՅԻՆ ԵՐԿԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԳԱՍՏԵՐԸ

Մայիսի 7-ի դրությամբ, Վրաստանում կորոնավիրուսի դեմ ընդհանուր առմամբ պատվաստվել է 54 687 մարդ: Լրիվ պատվաստման կուրսն անցել է 7000-ից ավելի քաղաքացի:

Հիշեցնենք, որ Վրաստանում պատվաստման գործընթացը մեկնարկեց մարտի 15-ին միայն բժշկական ոլորտի աշխատողների համար: Ավելի ուշ պատվաստվողների խումբն ընդլայնվեց եւ պատվաստվել սկսեցին նաեւ 65 տարեկանից բարձր քաղաքացիները: Ապրիլի 5-ից պատվաստման համար կարող են գրանցվել նաեւ 55 տարեկանից բարձր քաղաքացիները: Վրաստանում



պատվաստումն ընթանում է երեք՝ «Pfizer», «AstraZeneca» եւ «Sinopharm» տեսակի պատվաստանյութերով:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԱԴՐԲԵՋԱՆ




Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ

Մայիսի 5-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին մեկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Ադրբեջանում:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի, վարչապետ Ալի Ասադովի, միլիտեռլիսի խոսնակ Սահիրա Գաֆարովայի հետ: Կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները, կարծիքներ փոխանակեցին տարածաշրջանային եւ միջազգային քաղաքականության հասցեի շուրջ: Վրացական կողմի հավաստմամբ՝ բարձրացվեց նաեւ վրաց-ադրբեջանական սահմանագծում Դավիթ Գարեջի վանական համալիրի վիճարկե-

լի տարածքի հարցը: Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը, պատվիրակության անդամների հետ, ծաղկեպսակ դրեց Յեյդար Ալիեւի հուշահամալիրին: Պաշտոնական պատվիրակության կազմում էր Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին: Այցի ընթացքում Վրաստանի արտգործնախարարը հանդիպեց նաեւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի հետ:



ՂՐՂՁՍԱՆ-ՏԱԶԻԿԻՍԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵՑ ՀՐԱՂՂՈՒՐ

Ղրղզստանի եւ Տաջիկիստանի ազգային անվտանգության ծառայությունների ղեկավարների՝ Ղրղզստանի Բաթաքեի մարզում կայացած հանդիպումից հետո, կողմերը պայմանավորվեցին սահմանագծում հրադադարի հարցում:

Ղրղզստանում գինված ընդհարման ադյունքում զոհվել է 33, վիրավորվել շուրջ 160 զինծառայող եւ քաղաքացի, իսկ ինչ վերաբերում է Տաջիկիստանին, ապա, տեղի լրատվամիջոցների տեղեկատվությամբ, զոհվել է 10 եւ վիրավորվել մոտ 90 զինծառայող եւ քաղաքացիական անձ:

Հիշեցնենք, որ Ղրղզստանի եւ Տաջիկիստանի միջեւ իրավիճակը լարվեց նրանից հետո, երբ սահմանային շրջանների բնակիչների միջեւ ջրաբաշխիչ օբյեկտի հարցով ծագեց դիմակայություն:

ԱՄՆ

ՊԵՏՔԱՐՏՈՒՐԱՐ ԶՊՈՒՇԱՑՆՈՒՄ Ե ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

ԱՄՆ պետքարտուղար Էնտոնի Բլինկեն հայտարարեց, որ եթե Ռուսաստանը շարունակի իր ագրեսիվ քաղաքականությունը, ապա ԱՄՆ կձեռնարկի պատասխան միջոցներ:

Մենք կընդունենք պատասխան միջոցներ, եթե միտված չենք երկկողմ հարաբերությունների սրմանը: Մենք ցանկանում ենք Ռուսաստանի հետ ունենալ կայուն եւ կանխագծելի հարաբերություններ: Եթե Ռուսաստանը շարունակի գործել իրավիճակի սրման ուղղությամբ, մենք կդիմենք միջոցների: Կարծում են, նախագահ Բայդենը կկարողանա այդ մասին անմիջականորեն զրուցել Վլադիմիր Պուտինի հետ՝ անձնական հանդիպման ժամանակ,- հայտարարեց պետքարտուղարը:

ՈՒԿՐԱԻՆԱ

ԶԵԼԵՆՍԿԻՆ ՀԱՄՈՋՎԱԾ Ե ԵՐԿՐԻ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարեց, որ Եվրամիությունը Ուկրաինային ավելի մեծ աջակցություն պետք է ցուցաբերի վերջինիս եվրաինտեգրման հարցում:

Մեզ պետք է ընդունեն որպես հավասար եւ անբաժան գործընկեր: Ուկրաինան հզոր պետություն է, եւ այն միայն կհզորացնի Եվրամիությանը,- հայտարարեց Վլադիմիր Զելենսկին եւ հավելեց, որ արդեն յոթ տարի է, ինչ Ուկրաինան Եվրամիության առաջնադիրըն է:

Մեր գործընկերները գիտակցում են մարտահրավերները եւ նաեւ այն, որ Ուկրաինայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանը, կնպաստի Դոմբասում պատերազմի դադարեցմանը,- նշեց Ուկրաինայի նախագահը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԵՂԾՎԵՆ ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՉԱԳԱՆՔՄԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

Եվրոպական հանձնաժողովը պատրաստում է Եվրոպական Միության գինված ուժերի կազմավորման առաջարկությունը աշխարհում ճգնաժամերին արագ արձագանքելու նպատակով:

Արագ արձագանքման ուժերի ստեղծման հարցը եղել է միջոցառման օրակարգի կարեւորագույն թեմաներից մեկը: Խոսքը 5 հազար մարդուց բաղկացած խմբավորման մասին է: Նրանք կապահովվեն անհրաժեշտ միջոցներով, այդ թվում՝ տրանսպորտով ու ռազմական տեխնիկայով:

Առաջարկը սատարում են Եվրամիության 14 պետություն, այդ թվում՝ Ֆրանսիան եւ Գերմանիան:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱՎԱ. «ՄԵՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ»

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան հայտարարեց, որ կառավարությանը հաջողվում է առանց բիզնեսի գործունեության արգելափակումների վարակվածների թվի աճի ֆոնին կառավարել համավարակը:

Այսօր մենք կարողանում ենք լուծել մի շատ բարդ խնդիր՝ անցյալ տարի, այս ժամանակ, երբ վարակման մակարդակը համեմատաբար բարձր էր, մենք դա կարգավորեցինք՝ փակելով բիզնես ոլորտը, այդ փակումները բավական կոշտ էին, չնայած նրա, որ դա չէր վերաբերում ռազմավարական օբյեկտներին: Այս տարի մեզ հաջողվում է հասնել նույն նպատակին, այսինքն, կառավարել համավարակը՝ առանց փակումների: Մենք աշխատում ենք զբոսաշրջության ուղղությունը բացելու եւ վերականգնելու եւ, զուգահեռ համավարակը կառավարելու ուղղությամբ: Դա արվում է առանց փակումների: Դա շատ բարդ է, բայց հնարավոր է, եւ պատվաստումը դրան կօգնի: Ինչ վերաբերում է ցամաքային սահմանի բացմանը, ապա

մենք այս ուղղությամբ նույնպես աշխատում ենք: Աշխատանքներ են տարվում, որ կիրառվեն մոտավորապես նույն կանոնակարգերը, որոնցով մենք կառավարում ենք օդային սահմանները: Օրինակ՝ պատվաստված այցելուների համար ավելի հեշտ կլիմայի մուտքը եւ այլն: Մենք մտածում ենք, թե ինչպես կարելի է ցամաքային սահմանների դեպքում էլ կիրառել նույն սկզբունքը, եւ կարծում ենք, որ դա հնարավոր կլինի պատվաստման արագ տեմպի ֆոնին,- ասաց Նաթիա Թուրնավան:



ՕՐԵՆԱԴԻՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆԱԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՆՈՐ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տում թույլ տված անձը պետք է վճարի 1500-2000 լարի, կամ ենթարկվի 5-15 օր կալանքի:

Նշենք, որ օրենքի նախկին խմբագրման համաձայն, այդ գումարը կազմում էր 500-1000 լարի, կամ մինչև 15 օր կալանք, որը հնարավոր է փոխարինվեր 5 օրվա, այսինքն՝ նվազագույն շեմ սահմանված չէր:

Նոր խմբագրված տարբերակում, ըստ հոդված 173-ի սահմանված է, որ իրավապահ մարմիններին կամ իր աշխատանքը կատարող որեւէ այլ պետառաջնորդին վիրավորելու կամ չենթարկվելու դեպքում առաջին անգամ տուգանք է սահմանվում 2000-3000 լարիի չափով կամ

մինչև 15 օր կալանք: Նույնի կրկնության դեպքում տուգանքը կազմում է 3500-4500 լարիի չափով կամ 7-15 օր կալանքով:

Մինչ այս, գործող տուգանքը 1000-4000 լարի էր կամ՝ վարչական կալանք մինչև 15 օր:

Վարչական կալանքի ժամկետներին վերաբերող 247-րդ հոդվածով, վարչական կալանքի դեպքում, բերման ենթարկված անձը կարող է դատարան ներկայանալ կալանքի պահից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:

Հիշեցնենք, որ օրենքի նախորդ խմբագրման մեջ սաված էր, որ վարչական իրավախախտողի կալանավորման ժամկետը չպետք է 12 ժամից ավելին լիներ, չնայած հոդվածի երկրորդ կետը պարզաբանում էր, որ ոչ աշխատանքային ժամերը, ընդհանուր առմամբ, չպետք է գերազանցեին 48 ժամը:

Նշված փոփոխությունների հետ կապված սուր քննարկումներ են սկսվել քաղաքական դաշտում՝ ինչպես Վրաստանի ներսում, այնպես էլ Վրաստանից դուրս:

Արձագանքել է նաեւ ԱՄՆ-ը՝ կոչ անելով վերանայել կայացրած որոշումը: Առանձին պատգամավորներ կոչ են անում նախագահին վետո դնել օրենքի վրա: Հասարակական կազմակերպություններն իրենց հերթին հայտարարություններ են տարածել, շեշտելով, որ նման խիստ քայլերն անընդունելի են:

Ավելացնենք, որ խորհրդարանի կողմից ընդունված փոփոխություններն ուժի մեջ կմտնեն երկրի նախագահի ստորագրումից հետո:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՄԱՆ ՕՐԵՆԱԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ



ԿՐՈՆԱԿԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՅՑ, ՏԻՐՈՋ ՍՈՒՐԲ ԳԵՐԵՉՄԱՆԻՅՑ ԲԵՐՎԱԾ ԿՐԱԿԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Մայիսի 2-ին, Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եւ Հավլարի Սուրբ Էջմիածին եկեղեցիներում, հանգրվանեց Երուսաղեմում, Սուրբ Հարության տաճարից, Տիրոջ Սուրբ գերեզմանից բերված Սուրբ կրակը:

Վաղ առավոտից, ամբողջ օրվա ընթացքում, թբիլիսահայ հավատացյալները Սուրբ կրակն իրենց տուն տանելու հնարավորություն ունեցան:

Ցանկացած կանթեղ, որ վառվում է Աստու գերեզմանի տաճարում, արդեն հզոր, հրաշա-

քաղաքական խորհրդատվություններ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Սալոմե Ջուրաբիշվիլին անհատական հանդիպումներ է անցկացրել «Գիրչի», «Քաղաքացիներ», «Ռազմավարությունը՝ շինարար», «Լեւոն»

Վրաստանի համար», «Հանրապետական կուսակցության» ղեկավարներ. Յագո խվիչիայի, Լեւան Իոսելիանու, Գիորգի Վաշաձեի, Դավիթ Ուսուփաշվիլու, Կախա Կոժորիձեի, Խաթունա Սամինձեի եւ պատգամավոր Սալոմե Սամադաշվիլու հետ:

գործ ուժ ունի ցանկացած հավատացյալի համար:

Հիսուս Քրիստոսի գերեզմանից բերված Սուրբ կրակը, որն ունի լույսի եւ հույսի խորհուրդ, քրիստոսասեր հավատացյալներին ու նրանց ընտանիքներ է բերում Տիրոջ եւ Փրկչի ամենագործիքները:



Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍԿՍԿԵՑ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ
200 ԼԱՐԻ ՓՈԽՐԱՏՈՒՑՄԱՆ ՅԱՆՁՆՈՒՄԸ

Ինչպես տեղեկացրել է Ջրաղվաճության խթանման պետական գործակալությունը, շարունակվում է քաղաքացիների, այդ թվում՝ համաճարակի երկրորդ ալիքի արդյունքում աշխատանքը կորցրած քաղաքացիների նպատակային սոցիալական օգնության տրամադրումը:

Ջրաղվաճության խթանման պետական գործակալության տվյալներով, ապրիլի 24-ից սկսվեց ապրիլ ամսվա 200 լարի օգնությունն ստանալու համար գրանցումը, փոխհատուցում կատարող 120 496 անձ՝ 24 099 200 լարիի չափով:

Գերատեսչության տվյալներով, ներկա դրությամբ, մարտ ամսին 200 լարի օգնություն է ստացել 130 683 մարդ, ընդհանուր առմամբ, հատկացվել է 26 136 600 լարի, իսկ փետրվարին՝

140 029 մարդ՝ 28 005 800 լարիի չափով: Հունվարին փոխհատուցման գումարը փոխանցվել է 106 389 անձի՝ 21 277 800 լարիի չափով:

Հիշեցնենք, որ Վրաստանի կառավարության հակաճգնաժամային տնտեսական ծրագրի համաձայն, 2021 թվականի հունվարից աշխատանքը կորցրած քաղաքացիները 6 ամսվա ընթացքում ամսական 200 լարի օգնություն կստանան:

ԱՆՑՅԱԼ ՏԱՐԻ ՆՊԱՍՏ ՄՏԱՑՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԷՐ

Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2020 թվականին կենսապահովման նպաստ ստացող քաղաքացիների թիվը զգալիորեն ավելացել է:

Եթե 2019 թվականին երկրում նպաստ է ստացել 441 448 քաղաքացի, 2020 թվականին այդ ցուցանիշը

աճել է 42 254-ով եւ կազմել 483 702, ինչը կազմում է բնակչության ընդհանուր թվի 13 տոկոսը:

Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2020 թվականին կենսապահովման նպաստ ստացող քաղաքացիների ցուցանիշը հասել է վերջին 10 տարիների առավելագույնին:

ՄԵԿ ՄԻԼԻԱՐԴ 420 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ ԿԵՆՍԱԹՈՂԱԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ



Վրաստանի կենսաթոշակային գործակալության տարածած հաղորդագրության համաձայն, 2021 թվականի մայիսի 5-ի դրությամբ, կենսաթոշակային ակտիվների ծավալը հասել է 1.420 միլիարդ լարիի, որից կուտակված տոկոսները կազմում են 148,8 միլիոն լարի:

Գործակալության տվյալներով, կենսաթոշակային ակտիվները տեղաբաշխված են Վրաստանի տարածքում 11 տոկոս: Կենսաթոշակային ակտիվների 62 տոկոսը պահվում են ավանդային վկայագրերում եւ ժամկետային ավանդներում, իսկ 38 տոկոսն օգտագործվում է ընթացիկ հաշիվներում:

Կենսաթոշակային ակտիվները ներկայումս ներդրում են լարիով:

Նշենք, որ, ներկա դրությամբ, կուտակային կենսաթոշակից օգտվել է մինչեւ 800 մարդ: Կենսաթոշակային ծրագրում ներգրավված անձանց թիվն աճում է եւ միջին հաշվով ամսական ավելի քան 11,000 մարդ է միանում սխեմային, եւ այս պահին հաշվառված է ծրագրի 1,145,808 մասնակից:

Կենսաթոշակային ակտիվները ներկայումս ներդրում են լարիով:

Նշենք, որ, ներկա դրությամբ, կուտակային կենսաթոշակից օգտվել է մինչեւ 800 մարդ: Կենսաթոշակային ծրագրում ներգրավված անձանց թիվն աճում է եւ միջին հաշվով ամսական ավելի քան 11,000 մարդ է միանում սխեմային, եւ այս պահին հաշվառված է ծրագրի 1,145,808 մասնակից:

ՈՂՁՄԱԿԱՆ ՀԱՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ ՈՂՁՄԱԿԱՆ ԲԱԹՈՒՄԻ ՆԱՎԱՐԱՆԳՍՏՈՒՄ

Մայիսի 4-ին ԱՄՆ-ի առափնյա պահպանության USCGC HAMILTON (WMSL 753) նավը խարխուլեց Բաթումիի նավահանգստում:

Նավի այդ ծառայում է ԱՄՆ-ի եւ Վրաստանի միջեւ անվտանգության համագործակցության ամրապնդմանը, տարածաշրջանում խաղաղության եւ կայունության խթանմանը եւ Սեւ ծովի կարելությունները եվրատլանտյան անվտանգության համար: USCGC HAMILTON-ն առաջին անգամ է Բաթումիի նավահանգստում: Նավը Վրաստանի տարածքային ջրերում հյուրընկալվում է ՆԳՆ սահմանապահ ոստիկանության առափնյա պահպանության վարչության կողմից:


տության կառավարության նախագահ Թորնիկե Ռիժվաձեն:

Նավահանգիստ մուտք գործելուց առաջ Վրաստանի տարածքային ջրերում անցկացվեցին համատեղ ռազմածովային վարժանքներ՝ ԱՄՆ-ի առափնյա պահպանության նավի եւ վրացական առափնյա պահպանության նավերի մասնակցությամբ: Դասընթացը ներառում էր ռազմածովային մարտավարական գործակալություններ, որոնցում վարարական գործընթացներ եւ տարբեր ուսումնական տարրեր: Կայացավ Վրաստանի առափնյա պահպանության վարչության պետ, առաջին կարգի կապիտան Ռամազ Պապիձեի հանդիպումը ԱՄՆ նավի իրաւամատար, առաջին կարգի կապիտան Թիմ Բրոնհիմի հետ:



Ռազմամավի անձնակազմի անդամներն այցելեցին ՆԳՆ առափնյա պահպանության վարչության Փոթիի բազա եւ Ծովային գործողությունների կառավարման համատեղ կենտրոն (JMOC): Իրենց հերթին ամերիկացի գործընկերները վրացական պատվիրակություններին հյուրընկալեցին «Համիլթոն» նավի վրա:

ԱՄՆ առափնյա պահպանության նավը Բաթումիի նավահանգստից մեկնեց մայիսի 6-ին:



ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ ՎՐԱՍԱՆԸ ՏՈՆԵՑ «ԳԻՈՐԳՈՒՄ»

Վրաց Ուղղափառ եկեղեցին մայիսի 6-ին նշեց ամենասիրված սրբերից մեկի՝ Սուրբ Գեւորգի տոնը՝ «Գիորգոբան»:

Վրաց Ուղղափառ եկեղեցին տարվա ընթացքում տոնը նշում է երկու անգամ՝ մայիսի 6-ին (գլխատման օր) եւ նոյեմբերի 23-ին (անիվների վրա տանջանքների օր): Հատկանշական է, որ նոյեմբերի 23-ը պետական տոնի կարգավիճակ ունի, համարվում է ոչ աշխատանքային, այդ օրը նշվում է նաեւ իբրեւ Վրաց Ուղղափառ եկեղեցու առաջնորդամիստ Սուրբ Երրորդություն (Մամբրա) մայր տաճարի օր:

Սուրբ Գեւորգը դարձել է քաջության խորհրդանշան, ամենասիրված սրբերից մեկը՝ համարվելով վրաց ազգի պաշտպան:

ՄԱՅԻՍԻ 5-Ը՝ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Մայիսի 5-ը Մամուլի ազատության միջազգային օրն է: 1993 թվականի դեկտեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հատուկ բանաձեւով մայիսի 3-ը հռչակել է Մամուլի ազատության միջազգային օր:

Մամուլի ազատության համաշխարհային օրվա կապակցության հատուկ հայտարարությամբ հանդես եկավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

«Այսօր, երբ կեղծ լուրերի եւ ապատեղեկատվության տարածումը դարձել է ժողովրդավարության հիմնական մարտահրավերներից մեկը, լրատվամիջոցների պատասխանատվությունն ու պրոֆեսիոնալիզմն է՛լ ավելի կարեւոր է:

ԶԼՄ-ների ազատությունը եւ լրատվամիջոցների բազմակարծությունը երաշխավորված են մեր Սահմանադրությամբ,՝ հայտարարել է Դարիբաշվիլին:

ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐՈՒՄ 8 ՂԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ

Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին ներում է շնորհել ութ դատապարտյալի: Ներված դատապարտյալներից երեքը ամբողջությամբ ազատվել են պատժից, հինգի, այդ թվում՝ մեկ կնոջ, մնացած պատժապարտ կիսվել է:

Վրաստանի նախագահը ներման ակտը հրապարակել է մայիսի 6-ին:

ՀԻՄՆԱՆՆԳԻՐ

Ո՞Վ ԿՕԳՆԻ ԱԽԱԼՔԱԼԱՔՑԻ ԿԱՐՏՈՖԻԼԱԳՈՐԾՆԵՐԻՆ

Անցյալ տարի Ախալքալաքիի մունիցիպալիտետի գյուղերում ֆերմերները հավաքեցին կարտոֆիլի բավական հարուստ բերք: Ինչ խոսք, հարուստ բերք աճեցնելը ողջունելի փաստ է, այդուհանդերձ, ինչպես պարզվեց, բերքի մեծ քանակությունն էլ իր բացասական կողմն ունի:

Խոսքը պալարապտղի իրացման մասին է, որը վերջին տարիներին ախալքալաքի ֆերմերների աքիլեսյան գարշապարն է դարձել: Մունիցիպալիտետի գրեթե բոլոր գյուղերում, մասնավոր տնտեսություններում կուտակվել է տոննաներով կարտոֆիլ, իսկ իրացման շուկան ի վիճակի չէ ներքին ցանցերով այն իրացնել: Հիմնախնդիրը բարդանում է նաեւ նրանով, որ համավարակի պայմաններում առաջին անհրաժեշտության ապրանքների, այդ թվում՝ սննդամթերքի գրեթե բոլոր տեսակների թանկացման ֆոնի վրա, կարտոֆիլի գինը նկատելիորեն նվազել է: Այդուհանդերձ, ախալքալաքիցիները պատրաստ են, թեկուզ ցածր գներով վաճառել աճեցրած բերքը, սակայն քչերն են հավատում, որ դա իրենց կիսաջողովի: Հիմնախնդիրը բարդացմանը նպաստում է նաեւ այն հանգամանքը, որ տեղական կարտոֆիլին լուրջ մրցակից է դառնում ներկրած, էժանագին մթերքը: Օրինակ, Վրաստանի վիճակագրության պետական ծառայության տվյալներով, 2021 թվականի հունվար-մարտ ամիսներին, Վրաստանը 2,9 միլիոն դոլարով արտասահմանից ներկրել է կարտոֆիլ, ընդ որում, այդ գումարից 543 հազարը տրամադրվել է սերմացու կարտոֆիլի ձեռքբերմանը: Իսկ ինչ վերաբերում է սպառմանը, ապա, բավական է նշել, որ հենց ներկրված կարտոֆիլն է գնվում Վրաստանի ամենամեծ սպառողի՝ Վրաստանի պաշտպանության նախարարության կողմից:

Ծագած հիմնախնդիրը հարցով մեքս դիմեցինք Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Յուրի Ունանյանին:

«Մունիցիպալիտետի գյուղերում բավական մեծ ծավալի չիրացված կարտոֆիլ կա: Ի՞նչ է ձեռնարկվում կարտոֆիլի իրացման գործում ֆերմերներին օգնելու համար: - Ցավոք, չեք սխալվում, մունիցիպալիտետի գյուղերում, ներկա դրությամբ, կուտակվել է ավելի քան 10 հազար տոննա կարտոֆիլ: Անցյալ տարի կարտոֆիլի որոշակի քանակություն հաջողվել է արտահանել, գնորդները գալիս ու տանում էին, այս տարի, ցավոք, նման բան չեղավ: Մեր ֆերմերները փորձեցին անգամ գնի նվազեցմամբ հասնել իրացման ծավալների ավելացմանը, բայց չստացվեց: Մոտ երկու շաբաթ առաջ կարտոֆիլի իրացման գործում օգնության խնդրանքով դիմեցինք կենտրոնական կառավարությանը, գյուղատնտեսության նախարարությանը: Հուսադրեցին, որ միջոցներ կծեռնարկեն, հիմա սպասում ենք: «Վրաստանը» դիմեց նաեւ երկրի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարությանը, որտեղ նշեցին, որ պետությունը շուկայական քաղաքականությանը չի միջամտում: - Մենք հանդիպումներ ունեցանք արտահանման հարցերով զբաղվող ընկերությունների ներկայացուցիչների հետ, ներկայացրինք ստեղծված իրավիճակը: Ի հայտ եկան շահագրգիռ կողմեր: Ըստ երեւույթին, հիմա կանցկացվեն ֆերմերների եւ արտահանողների հանդիպումներ, կտարվեն բանակցություններ գնի ու ծավալների հստակեցման հարցով, ՝ խմբագրության հարցին ի պատասխան նշեցին նախարարությունում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵՐՈՒՄ

ՍԱՄՅԻՆ - ԶԱՎԱԽԵԹԻՈՒՄ ՆԵՐՎԱՅԱՎԵՅ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵՐՈՒՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի աշխատակազմը, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի տեղական իշխանության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ներկայացրեց քաղաքացիական իրավահավասարության ու ինտեգրման ռազմավարության նախագիծը: Հանդիպմանը ելույթ ունեցան հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի առաջին տեղակալ Լիա Գիգաուրին և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի պետական լիազոր Բեսիկ Ամիրանաշվիլին:



Լիա Գիգաուրին հանդիպման մասնակիցներին մանրամասն ներկայացրեց «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության» նախագիծը, խոսեց քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2015-2020 թվականների քաղաքականության ծեռքերումների և դեռևս առկա հիմնախնդիրների մասին:


Ել քաղաքացիական իրավահավասարության ու ինտեգրման ուղղությամբ գործող կազմակերպությունները: Մեծ նշանակություն ենք տալիս ռազմավարության փաստաթղթի նախագծի հանրային քննարկմանն ու քաղաքացիական հատվածի հետ համագործակցությանը: Փաստաթղթի մշակման գործընթացը թափանցիկ էր, և այն կքննարկվի բոլոր երկրամասերում: Այսօրվա քննարկումն արտակարգ նշանակալի է: Ներկայացվեցին համընդհանրականներ, այդ թվում՝ քննարկվեցին այն մեխանիզմները, որոնք կմեծացնեն ռազմավարության արդյունավետությունն ու շրջադարձային փոփոխություններ կիրականացնեն Վրաստանում ապրող ազգա-

յին փոքրամասնությունների ներկայացուցիչներին հասարակական իրավահավասարության և ինտեգրման ուղղությամբ: Նշանակալի էին շեշտադրումները, որոնք արվեցին պետական լեզվի կարգավիճակի ուժեղացման, միջնակութային երկխոսության, քաղաքացիական գիտակցության մակարդակի բարձրացման, ապատեղեկացման ուղղությամբ, ինչպես նաև կանանց իրավահավասարության թեմաներով: Հայտարարեց Լիա Գիգաուրին: «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021-2030 թվա-

կանների պետական ռազմավարության» նախագիծը մշակվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) և Վրաստանի՝ ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG), «Հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության և ինտեգրման ծրագրի» (PITA) աջակցությամբ: ՄԻՄՆ ԿԻԼԱԶԵ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԲԱՐԵՆԻՐԸ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐ ՈՒՂԻՆ



Լրացավ հասարակական գործիչ, լրագրող, բանաստեղծ, արձակագիր և ամենակարեւորը՝ վաստակաշատ մանկավարժ Վանիկ Ավագյանի ծննդյան 80-ե գրական, մանկավարժական գործունեության 60-ամյակները:

Վանիկ Ավագյանը ծնվել է 1941 թվականի ապրիլի 5-ին, Վրաստանի Ախալքալաքի շրջանի Փոքր Սամսար գյուղում, երկրագործի ընտանիքում: Նա շատ վաղ է գրկվել ծնողներից: Ավարտել է ծննդավայրի 8-ամյա, ապա՝ Բարալեթի միջնակարգ դպրոցը: Ընտրվել է որպես հայրենի գյուղի կոմերտական կազմակերպության քարտուղար, Ախալքալաքի ԼԿԵՄ շրջկոմի անդամ, նշանակվել գյուղական ակումբի վարիչ: 1962-68 թվականներին ավարտել է Երեւանի պետական լիակարգի բանասիրական ֆակուլտետը, ինչպես նաև՝ համալսարանի գեղագիտության բաժնի հատուկ դասընթացները:

բաժնի ղեկավարի, «Գրական Ջավախք» միավորման քարտուղարի և գրական բաժնի վարիչի, ինչպես նաև ժողովրդաբանի փոխտնօրենների, գլխավոր մասնագետի, մեթոդխորհրդի նախագահի պաշտոնները: Ստեղծագործական գործունեությամբ, Վանիկ Ավագյանը զբաղվել է դեռևս աշակերտական աստարանից: Գրողը երբեք չի մոռանում և խորին հարգանքով է հիշում հանրաճանաչ լրագրող, շրջանային «Փարոս» թերթի խմբագիր Մաթեոս Խոցանյանին, որին համարում է իր գրական առաջին ուսուցիչը: Այդ անվանի հրատարակիչը, ողջունելով պատանի դպրոցականի գրական առաջին փորձը՝ «Ինձ կանչում են լեռները մեր» ակնարկը, այն սիրով տպագրել է «Փարոս» թերթում:

Ավագյանը հեղինակ է «Լեռան գույներ», «Ճակատագրի նվագներ», «Լեռնաշխարհի սրնգահարը» և այլ բանաստեղծությունների ժողովածուների, նաև՝ ակնարկների, նորակերպերի, որոնք պարբերաբար լույս են տեսել մամուլում և առանձին հրատարակությամբ: Ընթերցողը ծանոթ է նրա «Տառապանքի արշալույսներ» պատմական վեպին, «Սրնգահարն են իմ լեռնաշխարհի», «Կարոն կարոս» ժողովածուներին: 2000 թվականից Ավագյանն աշխատում է Երեւանի Քրոք Քրոքորյանի անվան տնտեսագիտական համալսարանի Ախալքալաքի մասնաճյուղի բանասիրական բաժնում և դասախոսում է «Հայ գրականության պատմություն»:

2003-թ-ն, Սամցխե-Ջավախեթի նահանգական վարչության դպրոցների կառավարման և շրջանային կրթության բաժնի երաշխավորությամբ՝ Վրաստանի կրթության նախարարությունը բազմակատակ գրող-մանկավարժին արժանացրել է դպրոցավարության պատվավոր կոչմանը: 2007-ին նա, մեծահամբավ բարերար Արթուր Գիլոյանի հովանավորությամբ, լույս ընծայեց «Գոման գյուղի տարեգրությունը» ծավալուն գիրքը: Այսօր նա աշխատում է իր տասներորդ գրքի վրա:

Նորերս Վ.Ավագյանը՝ Սփյուռքում հայոց լեզվի պահպանության և զարգացման գործում ունեցած մեծ վաստակի և ներդրման համար, պարգևատրվել է հատուկ պատվոգրով: ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ, կրթության ոլորտում ներդրած ավանդի և անձնվեր գործունեության համար, Փոքր Սամսար գյուղի դպրոցի տնօրենը պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն պարգևով՝ Ոսկե հուշամեդալով:

Շնորհավորելով հանրաճանաչ մտավորականին հոբելյանական տարեդարձերի առիթով՝ Ախալքալաքի Ռեսուրս-կենտրոնի աշխատակազմը, ինչպես նաև մունիցիպալիտետի կառույցների ղեկավարները, մանկավարժներն ու գործընկերները մաղթում են նրան քաջառողջություն, մանկավարժական հաջողություններ: Բարին ընդ քեզ, մեր հարգարժան գործընկեր:

ՄԱՐՏԻՆ ԽՈՑԱՆՅԱՆ
Արույ գյուղի հանրային դպրոցի տնօրեն
Ախալքալաքի մունիցիպալիտետ

«Վրաստան» թերթը նույնպես շնորհավորում է իր գործընկերոջը: Սիրելի Վանիկ, մաղթում ենք քաջառողջություն, երջանկություն և ստեղծագործական հաջողություններ:

ԱՆՆԱՑՈՐԴ ՆԿԻՐՅԱԼԸ

Մեծ գրողներից մեկն ասել է. «Մարդը պետք է լինի խելացի, պարզ, արդարացի, համարձակ և բարի: Միայն այդ դեպքում նա իրավունք կունենա կրելու այդ բարձր կոչումը՝ Մարդ»:



Այս բնութագրող խոսքերը կարելի է վերագրել մեր Գեորգ Էքնոսյանին: Նա ծնվել է Սիվիլիսիում, 1956թ.մայիսյան մի գեղեցիկ օր: Միջնակարգ կրթություն ստանալով հարազատ գյուղի դպրոցում՝ նույն տարում ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը, որն ավարտել է 1979թ.: Իր հարազատ գյուղի հետ սերտ կապն էլ նրան բերել է նորից գյուղ, գյուղ, որ գալիս է հավերժության գրկից, որի գոյությունն առասպել է, իսկ պատմությունը՝ իրական: Գեորգն ապրել է արարել է իր գյուղի համար, որը գույն ու երանգ է ստացել իր և այստեղ ապրող մարդկանց տաղանդի, աշխատասիրության, իմաստության և նվիրվածության շնորհիվ: Գյուղում նա ստանձնել է տարբեր պաշտոններ՝ սովխոզի բրիգադիր, այնուհետև արհմիության նախագահ, իսկ 1988թ.-ից նշանակվել գյուղի սակրեբուլոյի նախագահ, մեր խոսքով ասած՝ գյուղապետ: Այսօր այս պաշտոնը, համաձայն մեր երկրի կանոնադրության, կոչվում է «մունիցիպալիտետի քաղաքապետի լիազոր գյուղում»: Մոտ 33 տարի նա վարել է այս պաշտոնը՝ իր ողջ ուժը, եռանդը, երիտասարդ տարիները նվիրել հարազատ գյուղի բարօրությանը: Անմնացորդ աշխատողի այս լավագույն հատկանիշները ժառանգել է իր ծնողներից՝ հատկապես հորից՝ Հովհաննես Էքնոսյանից, ով նույնպես երկար ժամանակ աշխատել է գյուղում՝ որպես գյուղսովետի նախագահ: Գեորգի ղեկավարած տարիներին գյուղի և համագյուղացիների ապրելակերպի մեջ զգալի դրական փոփոխություններ են իրականացվել: Նա եղել է գյուղի մի շարք շինարարական աշխատանքների անմիջական ղեկավար: Նրա ղեկավարության օրոք կառուցվել են երկար տարիների երազած դպրոց, փոքրերի համար՝ մանկապարտեզ, գյուղացիների առողջությունը պահպանելու և ապահովելու համար՝ բուժիչ, խմելու ջրի կուտակման համար ջրամբարներ՝ գյուղում և ամառանոցում, վերանորոգվել է արտերի ոռոգման համակարգը, մշակութային տունը: Վերջին տարիներին նրա գլխավորությամբ բարեկարգվել են գյուղամիջյան երկաթուղուց ճանապարհները: Մեծահասակների և փոքրիկների հանգիստը ապահովելու և կազմակերպելու համար Սիվիլիսիում հիմնվել է փոքրիկ պուրակ՝ խաղահրապարակով, լուսավորվել են նաև գյուղի երեմնի մութ փողոցները: Նշված բարեփոխումները կատարվել են նաև Վերին Սիվիլիսի և Իվլիտա գյուղերում: Այս օրերին նա հանգիստ խղճով թողեց քաղաքապետի լիազորի իր պաշտոնը և էստաֆետ փոխանցեց մեր գյուղի նորավարտ, 23-ամյա Հովհաննես Աբրահամյանին՝ հուսալով, որ սիրով ցանկանա և համբերությամբ մշակված արտը բարի ու առատ հունձը կտա:

Մեր սիրելի Գեորգ, քո աշխատանքի ընթացքում դու վայելեցիր շրջանի ղեկավարության և, գլխավորը՝ սիվիլիսիցիների սերն ու հարգանքը: Առիթից օգտվելով՝ բոլորի անունից շնորհավորում են Ձեզ ծննդյան օրվա առթիվ՝ մաղթելով արելաշատություն, քաջառողջություն, երկարակեցություն, սիրված ու հարազատ մարդկանցով շրջապատված հանգիստ ու խաղաղ կյանք: Թող Ձեր բարի ժպիտը, ազատ ու անկաշկանդ խոսքը, հունորի զգացումը միշտ ուղեկից լինեն կյանքում:

ԱՆԱՅԻՏ ՆԱՅԱՊԵՏՅԱՆ
Սիվիլիսիի հանրային դպրոցի տնօրեն
Ախալքալաքի մունիցիպալիտետ

«Վրաստան» թերթը միանում է բազմաթիվ շնորհավորանքներին ու մաղթում Գեորգ Էքնոսյանին երկար տարիների քաջառողջ կյանք և բարի ու վաստակած հանգիստ: